ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 490 - Ա

13 օգոստոսի 2019 թ.

«ՆՈՐԱՏՈՒՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ»ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերը

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականի օգոստոսի 14-ին, ժամը 10^{30}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Ղազարյան Անուշավան (մարզպետի խորհրդական), Հարությունյան Վանիկ (մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ), Վարդանյան Լուսինե (մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ), Դվոյան Սևակ (մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ), Բուդումյան Խաչատուր (մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ), Ղուրշուդյան Մարատ (մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության բաժնի վարիչ), Մնացականյան Վարդանուշ (մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ):

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Մարատ Ղուրշուդյանին, քարտուղար՝ Վարդանուշ Մնացականյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

13.08.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ